# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

**Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. մարտի**

**31 -ին կայացրած նիստի**

Նիստին մասնակցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Վայք քաղաքի բնակիչ Մկրտիչ Մարգարյանի, Գլաձոր գյուղի բնակչուհի Աստղիկ Ստեփանյանի դիմումները ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով,:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

**ՈՐՈՇԵՑ**

Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից Վայք քաղաքի բնակիչ Մկրտիչ Մարգարյանին և Գլաձոր գյուղի բնակչուհի Աստղիկ Ստեփանյանին պետական պատվերի շրջանակներում տրամադրել <<Գանձաղբյուր>> առողջարանի ուղեգիր:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ց.Բաբայան